

2019թ. հունիսի 30-ին տեղի ունեցավ «Արցախի ՀԷԿ» ԲԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովը: Ընդունվեցին հետևյալ որոշումները.

- Հաստատել «Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 2018 թվականի ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունները և հաշվապահական հաշվեկշիռները:

- Հաստատել «Ֆոր ԷՅ Քնսայթինգ» ՓԲԸ-ն որպես 2019 թվականի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող ընկերություն:

- Հաստատել զուտ շահույթի բաշխման համամասնությունները, այդ թվում՝  
1. Շահութաբաժիններ մեկ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ 11 % տարեկան եկամտաբերության հաշվարկով՝ ընդամենը 1 171 500 000 (մեկ միլիարդ հարյուր յոթանասունմեկ միլիոն հինգ հարյուր հազար ) ՀՀ դրամ:

2. Մասհանումներ պահուստային հիմնադրամին՝ զուտ շահույթի 5%-ի չափով 84 802 000 (ութսունչորս միլիոն ութ հարյուր երկու հազար) ՀՀ դրամ:

3. Զբաշխված շահույթ 439 723 000 (չորս հարյուր երեսունինը միլիոն յոթ հարյուր քսաներեք հազար) ՀՀ դրամ:

2018 թվականի արդյունքներով ընկերության բաժնետերերին վճարել շահութաբաժիններ՝ 1 բաժնետոմսին 110 (մեկ հարյուր տասը) ՀՀ դրամ հաշվարկով՝ վճարումը սկսելով 2019թ. հուլիսի 15-ից:

- Լրացուցիչ տեղաբաշխված 886.861 (ութ հարյուր ութսունվեց հազար ութ հարյուր վաթսունմեկ) հատ, 1.000 (մեկ հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ անվանական բաժնետոմսերի հաշվին ընկերության կանոնադրական կապիտալը ավելացնել 886.861.000 (ութ հարյուր ութսունվեց միլիոն ութ հարյուր վաթսունմեկ հազար) ՀՀ դրամով՝ սահմանելով այն 11.536.861.000 (տասնմեկ միլիարդ հինգ հարյուր երեսունվեց միլիոն ութ հարյուր վաթսունմեկ հազար) ՀՀ դրամ:

- Հաստատել «Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրությունը նոր խմբագրությամբ:

- «Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության Տնօրենների Խորհուրդ ընտրել հետևյալ կազմով՝

1. Հարությունյան Արայիկ
2. Բալյոզյան Բաֆֆի
3. Գրիգորյան Սարգիս
4. Բոյաջյան Հայկ
5. Ղոնյան Արա
6. Շեկոյան Վլադիմիր
7. Մկրտչյան Մենուա